47. ԱՄՊ

Էրկու հոգի կըլլին, էսոք Աստվածո առաջ ահա ու դաման կինին, աղբեար կըլլին, իրուր հետ կէրթըն ղուրպեթ:

Մենծ աղբեարը ըսըց. - Աղբեար, չիք կրնըր բանիր, մեք ի՞նչ դուր տի էնիք:

- Չիք կրնըր բանիր, լեառը թուրունտուքի՞ն էալ չիք կընըր ինի, դե, էլի էրթըք լեառը:

Էլան գընցին լեառը, հուսա, հունա զարկին, բան մի չըստացան:

- Աղբեա՛ր, մեք բան մի չըստացաք զդա. էրթըք ֆիլան թագավորի էրկիր:

Էլան գընցին էսոք դե Հնդստան, թագավորին պաղչի դուռը կայնան, հայան օր էրկու աղջիկ կեոլին վրա կայնած, ման կուգան:

Ամենքը տասը տարուց են:

Մենծ աղբերաը ըսըց. - Աղբեար, մեք ի՞նչ դուր տ'էնըք, դուն ի՞նչ մարիֆեթ ունիս:

- Ձեառքս ինդուր դուռ օր զինիմ, կը բացվի:

- Աղբեա՛ր, լավ մարիֆեթ ունիս:

- Դուռը իմ մենե, աղջըները բերելը իմ մենե, դու ի՞նչ տ'ինիս:

- Ես ալ ձի մը ունիմ, տասվերկու սահաթվա ճանփա մի սահաթվա կը կըյրե:

- է՞, աղբեա՛ր, դու կըյրես, ես ի՞նչ տ'էնիմ:

- Ես, աղբեար, քեզ կը խալըսեմ, հեչ հոգ մ'իներ:

Էդի դուռը գարկեց բացեց, աղջներու աչվանը կապեցին, հեծուցին թերքիստանը, ընկան գցին. շատ գցին, քիչ գցին, Աստված գիտե ինչ ղտի գըցին, ամսըվա մը ճանփա գըցին: Էն թագավորի ելքեեն* հեռացան, գըցին, մեկ մեշի մը մեջ բնակռան:

Մենծ աղբեարը ըսըց. - Աղբեար, մենք էս մեշի մեջ բնակռանք. էալ մեք մեշի մեջե չպտի հեռանանք. մեք հոսի խրտիչ մի շինենք:

- Մենք ըս աղջները բերաք, վիճակ նետիք հայիք, վե՞ր կըյնի էրկանը:

Էրկանը ընկավ մենծ աղբորը:

- Աղբեա՛ր, - ըսըց, - ծինը հեծիր, գնա տերտրու էտե:

Փուճուրը գնըց, տերտրու ըսըց: Տերտեր հասկըցավ դոր կը բնակռին:

- Չիմ իգար, դուք թուրունտի էք, - ըսըց:

Հինգ գեղ անցավ, չի կրցավ գտեր էր, էկավ հեմել իր տունը աղբորը պատմեց թե. - Հինգ գեղ անցա, չի կրցա գտեր տերտեր:

Աղբեարը ըսըց. - Քու բանը չէ, ես կէրթըմ:

Գնըց ճանփուն տերտեր մի ըռաստ էկավ:

- Օրհնեա ի տեր:

- Աստված օրհնե:

- Տերտեր, աղբեար մի ունիմ, տի կարգիմ, չըլլի՞ր գաս պսակես:

- Տեղդ վե՞ր տեղ է, հեռո՞ւն է, մոտիկ է:

- Տեր պապա՛, էրկու սահաթվա կըլլի:

- Աստված օրհնե, ես ծեր մարդ մ'իմ, չիմ կրնըր գար:

- Քիգի կը հեծցընեմ ձինը:

Հեծոց ձինը, ընկավ ճանփա, գնըց հասավ խրտիչը:

- Աստված օրհնե, էաս ի՞նչ է, - ըսըց:

- էաս մեր տունն է:

Տերտեր հայավ աղջիկներու՝ օր թագավորի աղջիկ են. ալմաստ քար, զարդարմուն շատ կա վրանին, տերտեր վախցավ ըսըց. - Չիմ կընըր պսակեր:

- Ինչո՞ւ չես պսակեր:

- Ըպա գրեցեք ինձի փուսուլա մը, տվեք օր պսակիմ:

- Տերտեր, ինչո՞ւ փուսուլա տանք, մեզ տի պսակես:

---

* Թագավորին հատուկ երկրեն (ծ.բ.):

Տերտեր ի՞նչ իներ. վախուն բերըց պսակեց. փարեն առավ, էլավ թողեց գնըց:

Ըս մարդիկը բերին ահտ ու դաման ըրին իրարու էրկու աղբեար, թե. «Իմը աղջիկ էղավ, քուվը տղա, ես քիզի տամ, քուվը աղջիկ էղավ նա, դու տի տաս իմ տղին»:

Էս էրկու աղբեար իրար հետ պաշլայեցին ավղուշ էրթալ ըդ մեշի մեջ, օխտը ամիս օր թմավ նե՝ էրկուսն էլ պարկան, մենծ աղբորը աղջիկ էղավ, փուճուրին՝ տղա: Ըսոք մենծըցան 2-3 տարեկան օր էղան, փուճուր աղբորը ըսըց. - Աղբեար, արի նշան դնենք:

Նշան դրին, էղան խնամի:

- Արի բաժվիք, օր իրար դավաթ էնիք:

Բաժվան, իրար դավաթ՝ շատ էլ ուրախութին ըրին:

Տղաք էղան եոթ տարեկան, մեկ վարժապետ մի ծեառք ցգեցին, փարա շատ տվին վարժապետին, որ կուտեր, կը խմեր, կը կարդացըներ, նե իսե վարժապետը ըսըց. - էսոց անվընները ի՞նչ է:

- Անուն չիք դրեր, - ըսին, - վարժապետ, կըլլի նե, առ, գնա, մկրտե էկո:

Վարժապետ տարավ մկրտեց, առավ էկավ. պաշլայեց դաս տալ: Աղջիկ ու տղեն օր պը օր կը մենծնային:

- Վարժապե՛տ, անվընները ի՞նչ դրիր:

- Աղջիկանը անունը Ալմաստ, տղին՝ Ալպորո:

Վարժապետը կարդալ թեքմիլ ըրըց, փարան առավ, գնըց:

- Աղբեա՛ր, վախտը տարաժամ է, - ըսըց փուճուր աղբեարը, - մեք ահտ ու դաման էրեր իք, աշունը հեարսնիք տի ընիմ ես:

- Միլիոն մի ալմաստ քար կը բերես, աղջիկս կը տանես, թե չես բերեր, չես տանիր:

Տղի պապը՝ փուճուր աղբեարը մտածեց, մտածեց մեռավ:

Տարին ընցավ, տղուն մերը խնամուն ըսըց. - Ընանկ բան ըսիր օր, իմ էարիկս մտածեց, մեռավ. էկո կըլլիր չըլիր, աղջիկդ տուր:

- Ես չիմ իտար, խոսացս չիմ ընիր:

Մեարը տղին ըսըց. - Ա՛յ որդի, պապս թագավոր է. թուղթ մի կը գրիմ, կը տանիս պապուս, ինչ օր ըսելու է, կըսե:

Տղան էլավ ընկավ Ճանփա, շատ գնըց, քիչ գնըց միայն Աստված գինա. գնըց թագավորի սարայը հասավ, թուղթը հասոց թագավորին, թագավորը առավ կարդաց, մտածեց, որ. «իրան աղջիկը ֆիլան թուրունտին է տարեր, ֆիլան մեշի մեջ խրտիչ է շիներ, արսուն տարի է»:

Թագավորը իմաց էղավ օր ըսի իրան թոռն է, շատ պատիվ տվեց ըս տղին:

- Թագավո՛ր ապրած, ես նշանած ունիմ, հոնի միլիոն մի ալմաստ քար կուզեն, տի տանիմ օր առնիմ նշանածս, մեարս գամ:

Թագավորը մտածեց, մտածեց ըսըց. - Հոս սիրուն, աղկեկ աղջիկ շատ կա, ինչ տի ինիս ըն աղջիկ. կը ճանփեմ մեարդ բերել կուտամ, որդի, - ըսըց թագավորը, - ես ծեր մարդ մ'իմ, տղա չունիմ, բան չունիմ: Աստված քիզի ինձիս նորեն տվավ, քեզ չիմ թողիր:

Մնըց ամիս մի, էրկուք: Չինաստանի թագավորը թուղթ գրեց էաս թագավորին. «Կռիվս կռիվ է, ֆիլան սայմանը կուտաս՝ տուր, չէ նե՝ պատրաստ կեցիր»:

Ըս թագավորը մտածոց մեջ ընկավ. ալ տղան մոռացավ, հրաման տվեց իրան զորապետնուն, կռիվ տի սկսին:

Կռիվը պատրաստեցին, պաշլայեցին իրարու հետ մարդ ջարդիլը:

Թագավորին խապար տվին, թե «մեր թարաֆը շատ մարդ ջարդվավ»:

Թագավորը մտածոց մեջ մնըց, շա՜տ-շա՜տ տուշունմիշ կըլլի:

Թագավորը շատ հերսոտավ, վեզիրին ու նազիրին ըսըց. - Եա իմ երկիրս տի տամ, եա էնոր տեմուր ղափուն տ'առնիմ:

Վեզիր ու նազիր թագավորին մինե խնդրվան:

- Հայտե, - ըսըց, - կըյրածնիդ կըյրած է. ցգածնիդ էլ ցգած:

Էսոք եոթ տարվընե եթմիշ տարվա մարդն էալ տարին կռիվը, ըսին. - Եա տի յաղթվիք մեռնիք, եա տի առնիք էդոց երկիրը:

Քսանը հինգ ավուր ճանփա Չինաստան թագավորի տեղ առին:

Չինաստանի թագավորը սինոդը նստավ իրան մարդերովը. բարեկամ թագավորներ իրան ղուվաթ տվեցին, էլան էկան կռիվը ըս թագավորին վրան. քսանըչորս սահաթ կռիվը բռնուավ. ըսոր թարաֆը բոզուլմիշ էղավ, առին սայմանները, էրկրները, մնըց մինակ քաղաքը: Քաղքին պարիսպին չորս դին առին, կայնան, մարդ դուրս չէր կրնըր էլլըր: Իրեք ամիս մարդիկը քաղքին մեջ մնացին եսիր:

Ժողովուրդը խնդիրք տվեց թագավորին թե. «Մեք դուս չիք կրնըր էլլըր. քաղքին մեջ սով ընկավ. թեսլիմ էղիր օր սովե ազատիք»:

Թագավորը մտածոց մեջ է մնացեր. ճարը կըյրըվեր է: Թոռը՝ Ալպորոն, գնըց խնդրվավ. - Արքա՛ հայրիկ, կը խնդրվիմ քիզի:

- Ըսը, որդի:

- Խնդրվիմ քիզի որ ես եոթն ու տաս զորապետ կըյրիճ տղա առնիմ, էլլեմ պարիսպեն դուս:

- Այ որդի՛, - ըսըց, - աշխրքի էրեսին մեկ դու ես մնացեր, ես օ վախճանիմ, վաղը թագավորութինս կը վերջանա:

- Արքա՛ հայրիկ, լավ կըսես. մեզ օր բռնեն, եսիր տանեն նե՝ շատ լավ կըլլի. մեռնիլը պարտ է, քան զեսիր տանիլը:

Թագավորը մտածոց մեջ մնըց. իրան մեկ թայ բերած էին Արապստանու. մարդ քովը չէր կրնըր էրթըր, հրեղեն ձին էր. տղան գնըց, իմաց էղավ ըդ ձիուն, գընըց օր մե ծերունի մարդ մի նստուկ է ձիու քով, չպող կը խմե, ախ-վախ կինե:

- Հայրի՛կ ջան, ինչո՞ւ ախ-վախ կինիս:

- Այ որդի՛, ես ախ-վախ չինիմ, վե՞վ տի ինե ըպա:

- Ի՞նչ պատճառովը ախ-վախ կինիս:

- Տղա՛, դու ըս երկրեն չի՞ս:

- Ծերունի՛, ես ուրիշ երկրե իմ:

- Ե՞բ ես էկեր:

- Էրկու ավուր գալած իմ, հայրի՛կ ջան:

- Ես գիտեմ օր աշխրքին ինչ օլտուղին խապար չունիս:

- Ըսա՛ հալվո՛ր, տեսնըմ ինդո՞ւր աշխարքե խապար չունիմ ես:

- Աշխարքե խապար չունի՞ս, մեզ եսիր կը տանե Չինաստանի թագավորը, բան չիմ հոգար, ըս հրեղեն ձին կը հոգամ, իմ շնլիք կըյրեին, ըս ձին չի տանեին:

- Է՛, հալվո՛ր, չըլլիր օր ձինը տաս, հեզնըմ, կռիվք էրթըմ:

- Չըլլիր:

- Լավ կըլլի, խնդրվիմ քիզի օր տաս հեզնըմ, կռիվը էրթըմ:

- Որդի՛, դու ճահիլ իս, հեչ կռիվը գընցե՞ր իս, կռիվի մեջ մտե՞ր իս:

- Հայրիկ ջան, չիմ գընցեր, չիմ տեսեր:

- Հեչ դուն քեզ սնամիշ ըրե՞ր իս բանի մը վրա:

- Հայրիկ ջան, ըրեր իմ:

- Ինչո՞ւ վրա իս սնամիշ ըրեր:

- Հայրի՛կ ջան, էնոր վրա իմ սնամիշ ըրեր օր հորս ձինը երբ կը տանեի, չայիր կը կապեի, ըդ ձիուն մեարմանդ կար թևիս պես հաստ, կը կղպեի. ավուր մեկը բալանիքը կորուսի, օլրտա, չի գտա, ձեառքս նետեցի զինճիլը, քաշեցի, կըյրեցի. ձինը առի գընցի:

- Որդի՛, ուժդ լավ, էլ ուրիշ ի՞նչ ունիս, անանկ կըյրուկ սուր ունի՞ս:

- Ունիմ:

- Ի՞նչ սուր է սուրդ:

- Իմ հորս իրեք թիզե թուր մի կա. քարի է էդեր, էրկթի է էդեր, կը զինիմ, կէջնա հողը:

- Այ որդի՛, - ըսըց հալվոր, - կռիվը քիզի է լայեղ, էրթըմ թագավորին իմաց տամ իգամ, ձինը տամ:

- Լավ կըլլի, ծերունի՛, քեզ տեսնըմ, քիզի համար ուզե ձինը, հալվո՛ր, իմ անունը մի տար:

Հալվորը գնըց, խնդրվավ. - Հա, ծերունի, ի՞նչ է:

- Թագավոր ապրած կենա, քիզի կը խնդրվիմ, մեկ զորապետ մի կա, շատ կըյրիճ է, ձին չունի, խնդրվիմ ձինը տաս, հեծնա, էրթա կռիվ:

- էադ ինդո՞ւր զորապետ կա մեր զորապետնուն մեջ, օր մեք իրեք ամիս է եսիր իք, իմաց չի տար, հիմա կուտա:

- Թագավոր ապրած կենա, ըդ մարդ տարի մի կա օր հիվանդ է, զորապետնուդ կըյրիճն է, հիմա սաղցեր է:

- Դե գնա, ձինը տուր, ինձիս էլ իմաց տուր:

Ձինը տվեց, տղան էլավ գնըց կռիվ:

Թագավորը էլավ կը հայի դեպի կռիվը:

- Ծերունի, ո՞ւր է, ըպա չէլլըր ան մարդը կռիվի:

Տղան թռավ էլավ ձիու վրան, հեծավ, դռան դուս էլավ, էրկու հեղ ձինը քշեց ըսդին, ընդին, օր տաքնա, իրեք թիզեն թուրը քաշեց, տալմիշ էղավ էօրտուն. կըյրածը կըյրեց, անքան ջարդեց օր, ջարդվածին արինը՝ սաղ մարդը ձիովը կը տաներ:

Փախողը փախավ, մնացողը բռնեց:

Քաղքին մարդոց հրաման տվեց. - Ըդ մնացած եսիրնին ժողվեցեք դռան ներս, դուռը կղպեցեք:

էն թագավորի մարդիկը կը փախեին. ինք էլ իրանց ջարդելեն կէրթըր: Հանեց թագավորի սայմանեն դուրս. թագավորը մարդ, զորապետներ ճանփեց հետին:

- Գընցեք ըդ մեր զորապետեն՝ խապար մի բերեք, զարկվա՞վ, թե սաղ է:

Հազար ձիավոր ճանփա ընկան գընցին. վեվ օր կըյրիճ մարդ էր, գընցին, տղին հասան:

Տղան ըսըց. - Ի՞նչ մարդիկ եք, կռվին չէկաք, հիմա էկաք:

Ընդոք ըսին. - Թագավորը ըսըց. «Գընցեք, խապար մի բերեք մեր զորապետեն»:

Տղան ըսըց.- Դուք հոս կեցեք, պեյեցեք ըս սայմանները:

Տղան դարձավ էկավ սարայը. ձիունը ի վեար էջավ, ծերունին բռնեց ձինը:

Տղան ըսըց. - Ծերունի՛, պղինձ մի ջուր կը դնես, կը տաքցնես, մի խալիպ սապոն կառնես, կը լոքցընես սապոնով, սապոնը վրան տի թմի, ձիուն պոյովը քեչե կը ցգես վրան. ոռուն տեղը հեճեալք կը թողես օր թրքե. աչվընուն տեղը ծակ կը թողես օր աչքը հայե. բերնին տեղը բերնին կեորեյի կը կըյրես, բերանը բաց մնա, կարմիր չամիչը կըլլես առաջը, եոթ տարվա գինին ջուրը կը խառնես, հետը կը դնես առաջը, էրկուք ջուր'մե մը գինի: Ծերունի՛, քիզի տեսնըմ, քու պախշիշդ կուտամ:

- Դու ի՞նչ մարդ իս, որ ինձիս պախշիշ տաս:

- Ես թագավորի թոռն իմ:

Ծերունին խափանմիշ էղավ ոտքը, ըսըց. - Ինչո՞ւ էվելը ինձիս իմաց չէրիր, էգիյեթ տվիր:

- Ես քիզի էգիյեթ տուի, պելքի իմ հայրիկս ղայիլ չէղավ, կռիվ էրթայի:

Մնըց ամսվան մի սորա, իրեք թագավոր պատրաստ տեսան, Չինաստանի թագավորի հետ էկան ըս թագավորի վրա կենե կռիվ, ըս թագավորին գիր ճանփեցին. իմաց տվին կռիվի համար:

Թագավորը մտածոց մեջ մնըց, թոռը ըսըց. - Հայրիկ ջան, ի՞նչ մտածոց մեջ մնացիր դու, քանի ես սաղ իմ, մի վախիր, տասվերկու թագավոր ըլլի նե՝ դեմը կայնած իմ:

Թագավորը խնդաց, բռնեց ճակատը պագեց:

- Որդի՛, թագավորութինս տվի քիզի, ինչ կինիս, էրե, կուզիս երկիրը տուր, կուզիս պեյե:

Տղան պաշլայեց կըյրիճ մարդիկը թոփիլը, թոփեց, էլավ սայմանին գլոխը, հինգ սահաթվա ճանփա էլ գնըց էնոց սայմանին մեջ. պոռին փչել տվեց. խորոզը կանչելուն պես՝ ձիանուն եմը տվին, իրան մարդիկը թոփեց մեկ տեղ, ըսըց. - Կանչեցեք էրկնուց, գետնուց ստեղծողին, հեծեք ձիանը, քաշեցեք ձեր թուրը, գըցեք էնոց ասկրին առեք մեջ:

Ըսոք պատրաստ էղան, գըցին, հախլա էրին, առին մեջ: Էնոց փաշան ըսըց. - Ջենկուի ձեան կուգա:

Խարախոլնուն մեկը խապար տուեց փաշին թե՝ չավրմիշ էրին մեզ:

Փաշան էմր էրեց թե՝ պոռուն փչեցեք օր թատարուք տեսնան, իրեք սահաթ կա լոսնալու:

Ըս թագավորի տղան ըսըց. - Վրա տվեք:

Վրա տվուին. տալմիշ էղան էօրտուի մեջ, քսանը չորս սահաթ ջարդացնին, ջարդեցին, փախողը փախավ, տարին դե զՏեմուր-ղափուն առին*:

Զորապետնուն մեկը ծիուն կիվենմիշ էղավ. - էրթըմ թագավորին մյուժտե տանիմ օր Չինաստանու Տեմուր-ղափուն առաք. անհոգ էղիր:

Հեծավ գընըց, մյուժտե տվեց: Թագավորը հանեց, մյուժտեն տվեց, ըսըց. - Ապրեք ու մնըք:

Թագավորը գիր գրեց տղին, թե. «Ես չիմ ուզիր էնոց սայմանը. էնոց սայմանը պախշիշ էրե էնոց, դուն ու քու ասկերդ քաշե, էկո տուն:

Տղան առավ, էկավ:

Մնըց տարի մի, ըդ թագավորներ խուրհուրդ էրին իրանց իրանց. «Մեք իրեք թագավոր ըլլիք ու ան մեկ ըլլի. ի՞նչ դուր տ'առնե, միզի բաշխե»:

Կը բերեն քաղքին չորս դին խանտակ կըյրին:

Կըյրեցին, պատրաստ տեսան, ցախ դրին վրան, ծածկեցին, օր ձինով գնացողը խանտակը չի տեսնա, մեջը ըյնա:

Չինաստանի թագավորի մեկը մտածեց մեջ մնըց, ըսըց. - Դուք պատրաստ տեսաք, խանդակ կըյրեցիք, միզի հարիր մարդ եսիր կա, եսիրը չառածտան ընդո՞ւր կռիվ կինիք, թուղթ գրեցեք, եսիրը ազատեցեք:

Թուղթ գրեցին, ճանփեցին ըս Հնդաստանու թագավորին, խնդրվան օր՝ «եսիրնիս, ճանփիս ի գա:

Թուղթն էկավ հասավ ... առավ թագավորը, կարդաց ասանկ. «Կը խնդրվիք, մեր հարիր մարդը ճանփիս գա»:

Թագավորը էնոց խնդիրքը լսեց. եսիրը ճանփեց:

Թագավորի տղան էլավ հետվանը իրեք սահաթվա ճանփա գնըց. ըդ հարիր մարդուն մեջ մենծ մի կար, աղբեար էր էղեր հետը, ինքը կըյրիճ էր, կըյրիճ մարդը շատ կը սիրեր, ճանփու դրեց, գընցին:

Տղան ետ դարձավ, էկավ, էնոք էալ գընցին: Վեց ամիս ժամանակ մնըց. Չինաստանի թագավորը թուղթ գրեց թե՝ կռիվս կռիվ է:

Կռիվը բռնվավ իրանց սայմանի օրթալախը, ըս թագավորի տղան ըսըց. - Դուք տեղաննուդ չիք թնտա. ես կռիվ կինիմ, դուք սեյիր կինեք:

Տղան ձին հեծավ, գնըց կռիվը, թուրը քաշեց, ընկավ միջվանը. ջարդելեն քշեց ձինը, առաջ գնըց, գնըց-գնըց մոտեցավ խանտկնուն, ձին քշեց օր ընցնի, ընկավ խանտակը օր քառսուն արշուն լեան, քառսուն

---

* Չինաստանի թագավորի տամուր-ղափուն (ծ.բ.):

արշուն խոր փորված էր, էրկու սահաթվա ճանփա ծին խանտակը կը նետվեր, կէլլեր, կըյնիր կինե խանտակը. հրեղեն ծինը խոնջցավ, ալ խանտըկեն չէլավ, մնըց տղան ալ վրան:

Չինաստան թագավորի շատ մարդիկը էկան, բոլրտեցին օր բռնին, տղան խանտըկին մեջն իքեան իրեք հազար մարդ ջարդեց:

Չինաստանի վեզիրը ըսըց. - Քար լեցուցեք խանտակը օր տակը մնա, մեռնի: Ամմա թագավորը էմր ըրըց՝ թե սաղ տի բռնեք էդ մարդը:

Ըդ զորապետը օր աղբեարացած էր ըդ տղի հետ, գտնվավ հոտի, իրան աղբորը վրա պաշլայեց լացը:

- Չեառքդ տուր ինձի, - ըսըց, - աղբեա՛ր:

Հանեցին խանտըկեն, կապեցին թևերը, առին գըցին սարայը:

Թագավորը կանչեց ըդ բռնողին, ըսըց՝ ապրի՛ս, զորանա՛ս:

Թագավորին տղան հանեցին էան թագավորին առաջ:

Թագավոր հարց ու փորձ ըրըց. ըսըց. - Քեզ թող տամ, կինե տի էրթաս իմ հետ կռիվ տի ինի՞ս:

- Սարայեն դուս էլլելուս քիմին՝ կռիվ տի ինիմ:

Թագավորը բարկացավ, ըսըց. - Տե՛, նետեցեք բանտը:

Նետեցին բանտը, հոնի մնըց...

Ան օր աղբեար էր էղեր, գիշերը էկավ, իրարուքով նստան, խորհուրդ ըրին:

Էնոց փաշան ըսըց. - Թագավորի տղա՛, ես քու հետ աղբեար իմ, ես օր քիզի բանտեն ու սարայեն դուս հանիմ, ինձիս ալ հետդ կը խալըսի՞ս, կը տանիս:

- Հա՛, քիզի էալ հետս խալըսիմ, կը տանիմ:

Առավոտուն դռվընին բացին, ծիանը պատրաստ տեսան, հեծան, թագավորի տղան ըսըց. - Աղբեա՛ր, դուն առաջ գնա, հեչ մի հայիր ետիդ, ես ետևեն ջարդելեն կուգամ. մարդ օր էղավ, իմաց էղան, դու առաջ գնա օր խալըսիս:

Էլավ դռան դուս, փաշան քշեց գնըց առաջ:

Թագավորին խապար տվին թե՝ թագավորի տղան փախավ:

Թագավորը հերսոտավ, ըսըց. - Եա տի մեռնեք, եա՝ պիթունդ տի ջարդվիք, ըդի բռնեք:

Իրեք սահաթուն հեռըցան քաղքեն:

Թագավորի տղան ետ օլրվավ, պաշլայեց էդոց հետ կռիվ ինիլը. ընքան մարդ ջարդեց օր արինեն ծիան աչքը չէր տեսներ:

Փաշեն ու տղեն պաշլայեցին ծիծաղալ էրթալը. գըցին հասան իրան սարայը. եբ մտան սարայը, թագավորը շատ ուրախութան մեջ մնըց:

Մըզըգանին փչվավ, դավուլպազնին զարկվավ, շատ մատաղներ կըյրըվավ, պիթուն ըս թագավորի էօլքեն մենծ ու պզտիկ ուրախութին էրին:

Աս թագավորը մի տարի մնըց հանգիստ, թագավորի տղան շատ միտք կիներ, թագավորը ըսըց. - Ինչո՞ւ կը մտածիս, ա՛յ որդի:

- Թագավորն ապրած կենա, ես չիմտածիմ, վե՞վ տի մտածե:

- Որդի՛, ի՞նչ բանի համար:

- Ըս տարի եոթ տարի է գալս, հեչ չես հարցըներ, թե ի՞նչ բանի համար կը մտածիս:

- ես ի՞նչ գիտիմ, թե ինչ բանի համար կը մտածիս, ա՛յ որդի:

- Ես ըն բանի համար կը մտածիմ, մեկ մեար մը ունիմ, ես ի՞նչ գիտիմ, անոթի մընըց, թե չէ՝ ծարավ:

- Ա՛յ որդի՛, ի՞նչ է խնդիրքդ:

- Խնդիրքս ընի է, օր մի միլիոն էլմաստ քար տի տաս:

Թագավորը տայանմիշ էղավ:

- Ըպա, թագավոր ապրած կենա, իմ էարընքս էրկու միլիոն ալ չաժե՞ր:

Թագավորը կանչեց վեզիրին. - Գնա՛, թանկագին խազինի դուռը բաց:

Թագավորն ու տղան էլան գըցին խազնեն:

- Այ որդի՛, ինչ ղտի կը վերցնես, վերցուր:

Տղան կրցածին ղատար վերցուց:

- Տե՛, հայրիկ, - ըսըց, - ինծիս ճանփու դիր:

Նստան թագավորն ու տղան. - Ի՞նչ դուր քիզի ճանփու դնիմ, իմ մենե էալ ի՞նչ կուզիս, քիզի կեորեի առիր:

- Քիզի ըրըճա կինիմ, ի՛նչ դուր կըսիս, հայրի՛կ, ես ըս փարեն տանիմ, տի տամ աներոջս, որ աղջիկը առնիմ...

Ըդի հոտ թող մնա, մեք դառնանք Չինաստանու թագավորին:

Չինաստանու թագավորը մեկ օր էլավ ավի, էկավ ըդ մեշի մեջ. ըս թագավոր ճեյրանի ու կեյիկա մարախլին էր, էկավ, խապար առավ օր ըդ լեառան մեշի մեջ շատ կա. հազար մարդով էկավ, մտավ ըդ մեշեն, բռնեցին քսան հատ ճեյրան, զարկին տասվերկու հատ կեյիկ, մութը վրա առավ, թագավորը ըսըց. - Մնացաք ըս մեշի մեջ ըս գիշեր:

Գիշերը տեսան օր մեշի մեջ ճրագ կը վառի, թագավորը ըսըց. - Լալա՛, հոս գեղ կա, ճրագին լոսը առըք, էրթըք:

Գըցին հայան օ հոտ թեք տուն մի կա: Ըդ տղին աները հայավ օր Չինաստանու թագավորն է, ավն է էկեր: Պատրաստ տեսավ թագավորին կերակուր: Նստավ թագավորը հաց կերավ:

Կնկան ըսըց. - Դու թագավորի ծեառքը ջուր լից: Ալմա՛ստ, դու էալ այլըխ ցգե թագավորին ծեռաց վրա:

Թագավոր աղջիկն օր տեսավ, խելքը ընցավ: Թագավորի սրտին վրա բերին ջուր լցին: Թագավորը էլավ նստավ ու կանչեց ըդ մարդուն, էկավ գլոխ տվեց թագավորին:

- Ըդ աղջիկը քու ի՞նչն է:

- Իմ աղջիկս է:

- Ես տի առնիմ:

- Ես խոսացեր իմ՝ միլիոն մի ալմաստ քարի:

- էրկու միլոն կուտամ ես:

Աղջկան մեարը շատ լացեց ու սըզլամիշ էղավ. ըսըց էարկանը. - Չիլլիր, ա՛յ մարդ, եոթը տարի է օր տղան գըցեր է ալմաստ քարի, օր աղջիկդ տվիր՝ կուգա մեզ սուրը կը քաշե:

Թագավորը ըսըց. - Թե ինչ էլ ըլլի, աշխարք իրուր խառվի, տ'առնիմ, սուլթան տինիմ:

Առավոտը աղջիկը առին, տարին. չէր էրթըր, կուլար, սըզլամիշ կըլլեր, արցունքներ կը թափեր. «Չամ էրթըր, չիմ էրթըր օր չիմ»:

Առավոտը աղջիկը զորով առին տարին:

Դառնանք աղջկան պապուն: Իրիկուն էղավ էարիկ կնիկ նստած էին սուս ու փուս, շատ կը մտածեն. ինչո՞ւ կը մտածեին:

Կը մտածեին թե Ալմաստը տվաք, տղան կուգա մեզ սուրը կը քաշե:

- Այ կնիկ, էլըք փախիք:

- Դո՞ր պտի փախիս, օձուն աղջիրը օր մըննըս, գուգա, մեզ կը գննա, սուրը կը քաշե:

- Այ կնիկ, ես բան մի մտածեցի:

- Ի՞նչ էր մտածեցիր:

- Տղան օր ճանփա էլլա, ավուր մի ճանփա օր մնըց, միզի գիր կը ղրկե ըն վախտը մենծ ղոչը ղարանֆիլով, ջենճեֆիլով պիպեռով՝ թունիրը կը վառիք, կէջըցընիք թունիրը, թող ըլլի պիրեան, էփավ նը կը հանիք թունիրեն, թոփ մի կտավ պատանք կինիք, կը դնիք ըդ ղոչը մեջը, կը կարիք, գերեզման կը բանաք, կը դնիք գերեզմանը, վրան հող կուտաք, մենծ

քար մ'էլ վրան կը քաշիք. աղջկան անուն էալ վրան կը գրիք, իրեք օրվա մեռած թարըխ կը զարկիք:

Դառնանք Չինաստան թագավորին, Չինաստան թագավորը ըդ աղջիկը տարավ իրան երկիր, սարայի մեջ իրեք օր պեյեց, ըսըց թե տի հարսնիք ինիմ, աղջկան հարցեք:

Աղջկան հարցոց Սուլթանը:

- Ես թագավորը չիմ առնիր, օր չիմ առնիր, - ըսըց:

Թագավորը բարկացավ, գնըց աղջկան քով, ըսըց. - Դու իմ թագավորութինս չիս հավնիր, աղկեկութինս չիս հավնիր:

- Ոչ, թագավոր, ես կը խնդրվիմ քիգի, մեք պեշիք-քերթմե իք, աշխարքն օր իրուր անցնի, ինձիս օր առնիս՝ եոթը չուճուխկա օր տեր ըլլիմ, կինե չիպտի առնիմ, տղան օր գա, տղան տի առնիմ:

Թագավորը վախցավ, ըսըց. - Հայտե, ես քիգի հավատացի, աղջի՛կ, ես կըսեի, զահար նշանած չունիս, երբ օր նշանած ունիս, ավտցա քիգի. ղու իմ քորս ըլլիս:

Գաք տղին:

Տղան էլավ ընկավ ճանփա, շատ գնըց, քիչ գնըց, միայն Աստված գինա ինչ ղտիկ գնըց, քառսուն ավուր ճանփա գնըց, մի ավուր ճանփա մնըց, խոնջեցավ, մի գեղ մընըց. մեկ օր հանգչեցավ. ըդ տունը մի կըյրիճ տղա կար. հանեց էրկու օսկի տվեց. գիր մի տվեց: Ըդ կըյրիճը գիրը առավ, գնըց տվեց մորը: Մեարը բան չուներ. մի այլըխ ուներ, ըս տղին պախշիշ տուեց:

Թագավորի տղան էլավ ընկավ ճանփա, մութը վրա առավ, հասավ:

Անները էկավ, պաշլայեցին լացը:

- Ինչո՞ւ համար կուլաք:

- Ալմաստի համար կուլաք, իրեք ավուր մեռած է, - ըսըց զոքանչը:

- Ես էնոր համար եոթ տարի կաշխատիմ, ալ ես սաղ կեցերիմ, ի՞նչ:

Տղան խենդցավ, մեարը սիլայը վրուն վեար առավ, տղա քիչ խելթփավ, ջուր լցին վրան:

- Տարեք ինձիս գերեզմանին վրա, - ըսըց:

- Այ որդի՛, գիշեր է, թող լուսնա:

Լուսցավ, էարիկ, կնիկ էլան փախան, մնացին մեար ու տղա:

Աեար ըսըց. - Գերեզմանը տի քակիմ:

Փետատը առավ, գերեզմանը քակեց, բացավ կտավը, վերոց գերեզմանեն հանեց:

- Մեար, քակե պատանքը:

Քակեցին, օր ղոչ մի:

Տղան շատ խնդաց, նստավ կերավ, էլավ վազըց, գնըց Ալմաստին տոլապը հայավ, գտավ մի գիր: Ալմաստ գրեր, հոն թողեր էր:

«Պապս ինձիս Չինաստան թագավորին ծախեց: Դուն քո Աստված օր կը սիրիս, ինձիս օր կը սիրիս, իրիկունը հասար՝ իրիկունը էլլես ճանփա, առավոտը հասար՝ առավոտը էլլես ճանփա»:

- Մեարիկ, ձինս քաշե:

- Այ որդի, ո՞ւր տի էրթըս:

- Ալմաստին էտև տի էրթըմ:

- Իցցուն ավուր ճանփա է, ի՞նչ դուր տի էրթըս, ես հոս մինակ կը մնամ:

- Վնաս չունի, - ըսըց, էլավ ընկավ ճանփա:

Շատ գնըց ... ճանփան կես ըրըց, օրը տասվերկու սահաթ քշեց, ձին էլ անոթի, ինք էլ անոթի, նե ջուր կա, նե հաց կա, գնըց մեկ չայի տայանմիշ էղավ, ջուրի վեար, ջուրի վեր քաշեց, հայավ օր կեչութ գտներ, չի գտավ, ձինը զարկեց լողը, անցավ ընդին, մթնեց. սահաթը հայավ, էրկու սահաթ գիշեր է գըցեր: Գընըց ընկավ չայիր մի, հողը սև, էրկինքը սև, ամպ, աստղիկ չէրևար. աչքդ մխտեն չերևար, գընըց ընկավ չայիրը, խոտը կէլլա ձիուն պոյը, մի սահաթ չայիրի միջուն գնըց, զօրով խալըսավ, ըդ չայիրեն էլավ, աղբիր մի ըռաստ էկավ. աղբրին վրա էջավ, ձին եմը առավ, մազրաղը զարկեց աղբրին գլոխը, ձինը չայիրի մեջ, քսանը հինգ օր էր օր տղուն աչքը քուն չէր մտեր: Տղան պարկավ, քնացավ, խորոզը կանչելուն արթըցավ, տեսավ աչքը բարձըցոց էրկինքը օր աստղերը կը փեալա. տեսավ օր աղբրին գլոխը մեկ բարձր լեառ մի կա. տղան դարձավ կինե քնացավ: Արևը վրան ցաթեր էր. ձին էկավ գլխուն վերի դին, խածեց տղի թևը, տղան վախցավ, վեր թռավ, հայավ օր իրան ձին էր, էլավ այարը վեար առավ, թիմարեց, այարը զարկեց. խոլանը քաշեց, իրան չուպուխը լեցոց, չախմախը զարկեց, պաշլայեց թյուբյունի խըմիլը: Տղան էլավ նստուկ տեղացը, կայնավ, հայավ օր ըդ լեառան գլոխը մեկ խոնախ մի կա, օր աշխրքի էրեսը չի գիտվիր, քերփիհին թամամը արզաթ, պզտիկը օսկի է. փա՜ռըլ փա՜ռըլ փառլամիշ կըլլի: Տեսավ օր կուժը ծեառքը մեկ մի կէջնա եամաճն ի վեար, ըսըց. - Բարև ձեզ, աղբեար:

- Աստուծո բարին:

- Ի՞նչ մարդ իս, էկեր իս հոս, էաս չայիրին մեջ սեապրե իս ձին, չե՞ս վախենար:

- Ինչո՞ւ տի վախենամ:

- Մեր մենծը թենպե ըրըց՝ թե «թող էլլե էրթա»:

- Դուք քանի՞ մարդ իք:

- Մեք Տոխսան տոխուզ (99) մարդ իք:

- Էյ, ի՞նչ կինիք հոսի:

- Ըս լեառան գլոխը սարայ մի շինիր իք, նստեր իք, ըս ճանփովը մարդ չէր իգար, օձը պորտովը, ճնճուղը թևովը, էլի՛ գնա՛:

Տղան էլավ, թուրը քաշեց, ըդ մարդուն մեկ թևը կըյրեց. ճանփու դըրըց, գնըց գլխավորին քով, գլխավորը հերսոտեցավ:

- Գնա, ըսա օր թող էլլի էրթա:

Մեկալը էկավ. - Տե, էլի գնա, մեր մենծը կըսե՝ «Թող էլլե, էրթա»:

Էդոր էլ քինքը կըյրեց ու ճանփեց: Մենծը էլ ղոչաղը ճանփեց, ըդոր էլ լեզուն կըյրեց: Էն գնըց, մեկը էկավ, էսոր էալ անկաջը կըյրեց, մեկին էալ արղան կըյրեց:

Մենծը հերսոտավ, էմր ըրըց, որ ծիանը հեծան բոլրտեցին զտղան, զտղան չկրցավ ժմնցըներ օր իրան մզրախը առներ, իրան իրեք թզնե թուրը, խալխանը առավ ձեառքը, ընկավ ըդ չայիրները. միլ տեղը գըցին. էնքան միտքը էկավ վրան, թե տոխսան տոխուզեն մեկ հատ մի չմնըց. տղին ձինը էնքան եարալի էղավ օր, փարայի մը տեղ չմնըց սաղ:

Տղան ալ իրան ձիան պես եարալի էր. ընկավ ճանփա, հինգ սահաթ ձինը առավ գնըց, ձիուն եարան պաղավ, թուլցավ, կես գիշերուն գընըց, թագավորին էգուն տակ հասավ, տղան ընկավ վեար, ձին էկավ թագավորին քեմեր ղափուն, հըռհռաց. թագավորին իմաց տվին, ձին տեսան օր պիթուն եարալի է, կաշի օլաճախ չկա վրան. էնքան օր ծակծկեր է: Թագավորը հեքիմ բերըց օր ձիուն հայի:

Լուսցավ, թագավորը մարդ ցգեր էր օր ձիան տերը գտնին: Տղան կես գիշերուն խելքը գլոխը էկավ. գնըց մտավ խաղողին թևկին տակը, իրեն հեչ բան չէր պիննար. թյութին կը պիննար, ձեառքը նետեց քեսեն. լեցոց չուպուխը, չախմախը զարկեց. կրակը դրեց չուպուխին վրան. խմեց ու դըլըֆավ:

Էդ էգին սուլթանին օդայի փենճերեին տակն էր. Ալմաստը հայավ օր թևկին տկուն չուպուխ խմելուն լոս կէրևա:

Ալմաստը սուլթանին ըսըց. - Մեարիկ ջան, թևկին տկուն չուպուխ խմելու լոս կէրևա:

- Չըլլի էն եարալին է, - ըսըց սուլթանը:

Մարդ ճանփեցին, տեսան օր եարալին էր, առին էկան, դրին մեկ օդա մի կանչեցին հեքիմը, մարդ ճանփեց թագավորին. - Տե, տղան գտեր իք:

Թոփվան էկան. թագավորը զրուցեց տղուն հետ, տղան կը լղրցըներ չէր կընոր հասկըցներ, թագավորը հրաման տվեց հեքիմին օր բաց ինե լեզուն, օր իմանանք գըլխուն էկածը:

Իրեք ավուր տղին լեզուն բացվավ, թագավորը էկավ խոսոհթին ըրըց տղին:

- Տղա՛ս, էաս ի՞նչ է քու հալդ, քեզի վեվ զարկեց:

- Ես էկա, չայիր մի էջա, մեկ մենծ լեառ մի կար չայիրի գլոխը, մեկ սարայ մի կար օր արզաթ ու օսկի էր, փառըլ, փառըլ, փառլամիշ կլլիր. կռիվ էրիք ըդ չայիրի մեջ. անքան ինձ գիտիմ օր տոխսան տոխուզին մե մի չի մնըց. - Թագավո՛ր, իմ ձինս ո՞ւր մնըց:

- Ձինդ սաղցուցեր իք:

Թագավորը շատ խնդաց տոխսան տոխուզի համար, կանչեց վեզիրն ու նազիրը. - Գըցեք ըդոց եուրդը քակեք, մալով-մուլով առեք էկեք:

Գըցին օ քուլլի ջարդված ին, առին բերին ինչ օր ըդոց կար:

Թագավորը էլավ գընըց ավը. հեքիմը էկավ տղին բրինձե չորպայի իզին տվեց. ըսըց՝ անլի հեչ բան մի ուտեր, գնըց ինք իր տունը: Սուլթանը էկավ տղին տես:

էկավ ըսըց. - Այ որդի՛, ինդո՞ւր իս:

- Սուլթանը ապրած կենա, լավ իմ:

- Ի՞նչ կը պիննա:

- Ինձիս շերպեթ մի կը պիննա:

Սուլթանը գնըց տուն, մերդե շերպեթ մը ըրըց. տվեց Ալմաստին, տարավ տվեց տղին: Տղան առավ խմեց: Կեսը օր խմեց վեար տի դներ՝ Ալմաստ ըսըց. - Քուլլի խմե:

- Չէ, շատ կըլլի, կեսը դու խմե:

Թասը դրեց վեար:

- Ձեռացս բռնե էլիմ, - ըսըց տղան:

Ալմաստ բռնեց: Տղան շատ էր անցեր, ձեառքը բռնած ժամանակը մաննին մնըց աղջկան ձեառքը, աղջիկը առավ, հայավ օր իրան անունը մեջը գրմուն իրան մաննին է:

- Այ կըյրիճ, ըս մաննին քիզի վեվ տվեց:

- Հայիր վրան, մաննին կը ճանչնա՞ս:

- Ըս մաննին իմն է:

- Մաննին օր քունն է. ես էլ քունն իմ:

Հոտի ըս էրկուքը ճանչվորցան, փաթտվան իրուր, պաշլայեցին լացը... Սուլթանը հայավ օր աղջիկն ու տղան իրուր փաթտած կուլան:

- Հա, ի՞նչ կա, ինչո՞ւ կուլաք:

- Ժամանակը չէ, մի ժամ էտև էկո պատասխանը տամ, - ըսըց տղան:

Սուլթանը մի սահաթ էտև էկավ. սուլթանին նաղլ ըրըց, ամեն բան եթուկ էղավ՝ օր ըս ըսոր նշանածն է: Թագավորը օր լսեց, շատ խնդաց, տոխսան տոխուզն էլ վերջացած էր, ընուր համար շատ խնդաց օր ըն գեշ թուրունտիներեն իրան աշխարք երկիրը ազատեց:

Տղին ու աղջկան համար եոթն օր եոթ գիշեր հեարսնիք բռնեց. ըրըց էդոր իրան տղա: Մըզըկանին փչվավ, դավուլպազնին զարկվավ: Հեարսնիքը էրին. էնոք հասան իրանց մուրազը, դուք ալ հասնեք ձերը:

Հեարսնիքը էրեցին, էլավ գնըց մորը էտև, մալով մերարով առավ էկավ ըս թագավորին քով օր տղա էղավ, իրեք օր մնըց. թագավորին խնդիրք տվեց: Թագավորը կանչեց տղին:

- Ի՞նչ է ինձիս խնդիրք տված իս:

- Ինձիս իզին տաս իրեք ամիս:

- Ո՞ւր պտի էրթըս:

- Աղբեար մի ունիմ, տ'էրթըմ աղբորս քով՝ տի պսակիմ, գամ:

- Քանի մի խարճլխ կուզիս նը՝ առ գնա:

Բանալիքնին նետեց վրան:

Տղան էլավ գնըց խազնեն, առավ թերքի մի օսկի, էլավ հեծավ ձինը, ընկավ ճանփա, գնըց հասավ իրան պապու սարայը: Աղբեարը դեմը էկավ, իրուր ձեառք բռնեցին, գըցին սարայը մտան:

Հուրի մնըց ամիս մի, տեսնվավ պապուն հետ:

Պապուն գրեց մեկ արզըհալ: Պապը կանչեց տղուն ըսըց. - Ըս ի՞նչ արզըհալ է, որդի՛:

- Այ պապ, էկեր իմ օր աղբեարս կարգիմ. իզին տի տաս...

Իզին առավ, աղբեարը կարգեց. եոթն գիշեր հեարսանիք բռնեց, ուրախութին ըրըց, դարձավ գնըց Չինաստան թագավորի մոտ, իրան տեղ: